№ 11 Յունվարի 23 (Փետրվարի 4) 1882 Յունվարի 23 (Փետրվարի 4) № 11

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ· Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօնօրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան մահմետականներ:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: «Русскій Курьеръ» լրագրի Թղթակցութիւնը: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Դաւիթ բէկ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՀՄԵՏԱԿԱՆՆԵՐ

„Кавказъ" լրագրի № 18 մէջ կարդացինք մի պատասխան „Մշակին" ստորագրված Մահմետական, մեր արած նկատողութեան առիթով մահմետական սուննի դաւանութեան մուֆտիի նշանակութեան մասին: Մենք չենք խօսի այն բանի վրա թէ պ. Մահմետականը հաւանում է թէ չէ հաւանում այս կամ այն անձնաւորութիւնը, արժանաւոր թէ անարժան է համարում Թուրք „Զիա" լրագրի խմբագրին մուֆտիի պաշտօնը վարելու,—դա ամեն մարդու անձնական հայեացքի, համակրութեան, վերջապէս ճաշակի բան է:

Մենք կը խօսենք միայն յօդուածագրի վերջին խօսքերի մասին:

„Մուֆտիի ընտրութիւնը և նշանակութիւնը, ասում է պ. Մահմետականը, պէտք է կատարվի կառավարութեան ձեռքով, որ հոգում է մահմետականների լուսաւորութեան բարելաւութեան մասին և ոչ թէ „Մշակի" առաջարկութեան և յանձնարարականի հիման վրա, քանի որ „Մշակին" խորթ են տեղական մահմետականների շահերը:"

Նախ մենք կասենք որ մի տեղական լրագրին, ինչ լեզուով էլ հրատարակվի նա, երբեք ոչ մի բարոյական կամ հասարակական երեւոյթ խորթ չէ կարող լինել: Քաղաքական և հասարակական թերթը, լինի նա ռուսերէն «Կովկաս», վրացերէն „Դրօէբա" կամ հայերէն «Մշակ», պէտք է հետաքրքրվի ամեն հասարակական, քաղաքական և բարոյական երեւոյթներով, որոնք վերաբերվում են մեր ընդհանուր հայրենիքին, Անդրկովկաս երկրին: Քաղաքական և հասարակական թերթ չէ կարող այս կամ այն կրօնին պատկանել: Մի՞թէ որովհետև լրագրի խմբագիրը ինքն լուսաւորչական կրօնին է պատկանում, լրագիրը չէ կարող յարձակվել հայ-բողոքականների վրա, եթէ սրանք ուրանում են իրանց հայ ազգութիւնը և իրանց նէմսա են ասում, կամ կաթոլիկները իրանց Ֆրանկ են ասում: Մի՞թէ մի հայոց լրագրին չէ կարող հետաքրքրել որ մեր մահմետականները տգէտ են մնում, կամ որ նրանց դպրոցներում վարժապետները անողորմ կերպով ծեծում են աշակերտներին: „Кавказъ" լրագրի յօդուածագիրը չէ հասկանում այն պարզ միտքը որ մի երկրի բոլոր ազգաբնակութիւնները, որոնց վիճակված է միասին ապրել, ունեն ընդհանուր շահեր և մինի անշարժութիւնը կամ յետադիմութիւնը միւսին էլ վնասում է: Եթէ մեր Թուրք ազգաբնակութիւնը մնայ անկիրթ և բարբարոս, կը պարապի դիցուք աւազակութեամբ,—մի՞թէ նրա այդ դրութիւնը ազդեցութիւն չի ունենայ և հայոց խաղաղ ազգաբնակութեան վրա, որին վիճակված է Թուրք ազգաբնակութեան հետ միասին ապրել:

Դիցուք „Մշակը" մի նկատողութիւն կը տայ Թիֆլիսի կլասիկական գիմնազիայի վրա: Եւ ահա մեզ կը պատասխանեն. «դուք հայոց լրագիր էք հրատարակում, դուք ինքներդ լուսաւորչական կրօնի էք պատկանում, դուք ի՞նչ գործ ունէք խառնվել մի պետական դպրոցի գործերի մէջ:»

Բայց այդ տեսակ ասողները մոռանում են որ նախ յիշեալ դպրոցում կան և հայ աշակերտներ, երկրորդ՝ որ եթէ ոչ մի հայ մանուկ էլ չը լինէր գիմնազիայում, դարձեալ լրագիրը որպէս հասարակական օրգան, կատարեալ իրաւունք ունի հետաքրքրվել երկրի բոլոր դպրոցներով, չը նայելով որ այդ դպրոցների մէջ միմիայն կովկասեան ռուսներ կամ վրացիներ ուսանէին:

Լրագիրը, քաղաքական թերթը կրօն չունի: Մենք նոյնքան իրաւունք ունենք հետաքրքրվել հայ բողոքականների հասարակական գործերով, որքան էլ իրաւունք ունենք մեր կարծիքն առաջարկել հայ-կաթոլիկների եպիսկոպոսի ընտրութեան մասին:

Մի երկրի բոլոր ազգաբնակութիւնների հասարակական շահերը միմեանց հետ կապված են և ամեն մինի հասարակական երեւոյթ միւսի վրա ներգործութիւն ունի:

„Кавказъ" լրագրի յօդուածագիրը ասում է թէ մուֆտիի ընտրութիւնը կամ նշանակութիւնը կախված է տէրութենից, բայց մենք էլ նրան կը պատասխանենք որ լրագրի պրօգրամայի հաստատելը նոյնպէս կախված է տէրութենից և երբէք կառավարութիւնը, հաստատելով հայոց լրագրի պրօգրամը, չէ ասել խմբագրին՝ „հայոց թերթ հրատարակելով, դու իրաւունք կունենաս միմիայն հայոց վրա խօսելու, իսկ իրաւունք չես ունենայ ոչ մահմետականների մուֆտիի վրա, ոչ էլ վրաց սեմինարիայի վրա դատողութիւնդ տալու:"

Դրանք ընդհանուր սկզբունքներ են, որոնց հիման վրա „Մշակը" և ամեն լրագիրը իրաւունք ունի երկրի ամեն հասարակական, տնտեսական և բարոյական երեւոյթների վրա խօսելու, բայց կայ և մի աւելի զօրաւոր փաստ, որի հիման վրա մենք կատարեալ իրաւունք ունենք մեր համեստ կարծիքները յայտնելու մահմետականների մուֆտիի ընտրութեան մասին:

Ռուս լրագրի յօդուածագիրը, թէև ստորագրում է Մահմետական անունով, բայց մենք կասկածում ենք թէ նա կովկասեան մահմետականներից լինէր, այլ աւելի հաւանական է որ պարոնը Ղազանի, վերջապէս Եւրոպական Ռուսաստանի Թուրքերից է, որովհետև երեւում է թէ անծանօթ է երկրին, իր տգիտութիւնն է ցոյց տալիս մեր մահմետական ազգաբնակութեան վրա: Թող պարոնը իմանայ որ կովկասեան հայոց թերթը կատարեալ իրաւունք ունի հետաքրքրվել մահմետականների հոգևոր գլխի նշանակութեամբ և այն պատճառով որ մեր մահմետականների թւում ահագին պրօցէնտ կայ հայ մահմետականների: Մենք չենք էլ խօսում Շիա աղանդին պատկանող Ղարաբաղի հայ բազմաթիւ մահմետականների մասին, բայց թող պարոնը նեղութիւն կրի ճանապարհորդելու նոր նուաճած երկիրները, Ղարսի նահանգը, և կը համոզվի որ այդտեղի սուննի դաւանութեանը պատկանող այդպէս ասված Թիւրքերի մեծ մասը, եթէ չասենք ամենքը, հայ-մահմետականներ են: Նրանց տիպը, բարք ու վարքը, սովորութիւնները, շատ տեղ ընտանիքում գործածվող հայոց լեզուն, նրանց անունները՝ Ալի-Պօղոս, Կարապետ-Մահմադ օղլի և այլն, նրանց գիւղերի մօտ մնացած հայ եկեղեցիների աւերակները և հայոց գերեզմանները, նրանց շատերի սովորութիւնները հա-

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

ԻԸ

Դուրս գալով փոսից, խանը շարունակեց իր դանդաղ ընթացքը: Նա գտնվում էր սարսափելի ինքնամոռացութեան մէջ: Նրան տիրել էր այն երազական դրութիւնը, երբ մտքի տեղ արթուն է մնում միայն երևակայութիւնը: Ամեն առարկայ, ցնորքի նման, նրա վրա միայն վայրկենական տպաւորութիւն էր գործում. յանկարծ երևան էր գալիս և շուտով էլ մոռացվում էր: Բերդի մէջ բարձրացած սոսկալի աղաղակները, հրանօթների որոտը, յուզված, զարհուրված ամբոխի դղրդոցը նա այլ ևս չէր լսում: Նրա ականջներին դիպչում էին միայն անորոշ և ոչինչ նշանակութիւն չունեցող ձայներ, և անցնում էին քամու մեղմ սօսափիւնի պէս: Նա չէր տեսնում և հրդեհների բոցը, որ բարձրանում էր թէ աղքատի խրճիթից և թէ հարստի ապարանքից, և հրեղէն վիշապների նման, պտտվում էր, գալարվում էր օդի մէջ: Նա տեսնում էր միայն լոյսի հազիւ երևցող նշոյլներ, որոնք մոլաշրջիկ կրակների նման վառվում էին և րոպէական լուսաւորութիւնից յետոյ, դարձեալ անհետանում էին:

Նա դուրս եկաւ ամրոցի մօտ մի և նոյն անբացատրելի բնազդումով, ինչպէս լուսնահարները գտնում են իրանց ցանկացած տեղը, թէև քնած են լինում: Մտաւ դիւանատան բակը, կանգնեց և մի քանի րոպէ խորին ապշութեամբ նայում էր վառվող շինվածքների վրա: Նրա դէմքի վրա երևաց մի տեսակ անմիտ ժպիտ, գլուխը շարժեց և իր քայլերը ուղղեց դէպի կանանոցը: Այստեղ հարեմական բոլոր կարգերը խանգարված էին: Դռների մօտ պահապաններ չը կային, ներքինիներ չէին երևում, բայց այստեղ ամենայնիւ, ոչ ոք դեռ այնտեղ մուտք չէր գործել, մի և նոյն աւանդական երկիւղածութեան շնորհիւ, որպէս մէկը չէ համարձակվում մտնել մի որ և իցէ ամայի տաճարի մէջ, թէև նրա դռները բաց է տեսնում: Թշնամին, դեռ ևս իր գործը բոլորովին վերջացրած չը լինելով մահմեդական ամբոխի և զօրքի հետ, մինչև այստեղ տակաւին չէր հասել:

Կնիկների բազմութիւնը, փակված իրանց օթեակներում, օրհասական երկիւղի մէջ, սպասում էին սոսկալի ճգնաժամին: Կինը, մանաւանդ մահմեդական կինը, պատերազմի ժամանակ, աւելի փոքր երկիւղ ունի, քան թէ տղամարդը: Նրա մէջ գտնվում են այնպիսի արժանաւորութիւններ, որ թշնամին նրա հետ բաւական մեղմութեամբ է վարվում: Այդ կէտից նայելով, կնիկների երկիւղը այնքան թշնամու կողմից չէր, որքան ամրոցում յայտնված հրդեհից: Կրակը արդէն անցել էր կանանոցի մէջ, մի քանի սենեակներ այրվում էին: Կնիկները դուրս փախչելու թոյլտուութիւն չունէին, որովհետև, իրանց վրա հսկողներից մէկը պէտք է լինէր, որ նրանց իրաւունք տար դուրս գալու, իսկ այդ մէկը, որ ներքինապետն էր, չը կար:

Նա ուրուականի նման անցաւ կանանոցի բակից և մտաւ Զուբէյդա խանումի նախասենեակը: Ծերունի Ասատը իր սովորական պարտաճանաչութեամբ, իր սղոցի Թեփով լցրած բարձը գլխի տակին դրած, և վերմակի փոխարէն, իր վերարկուի մէջ փաթաթված, պառկել էր տիկնոջ օթեակի դրան հանդէպ: Խանը չը նկատեց նրան, և կոխ տալով, նրա վրայից անցնելու միջոցին, ծերունի պահապանը քնաթաթախ վեր թռաւ, զարկվեցաւ նրան, և նա, չը կարողանալով պահպանել իր դիրքը, ընկաւ ծերունու վրա: Երկու քնէածներ սկսեցին անգիտակցաբար միմեանց տրորել, միմեանց կողքերը ջարդել: Վերջը ծերունուն յաջողվեցաւ բռնել խանի կոկորդից, գոչելով. «Գողը... գողը... շուտ հասէք... բռնվեցաւ գողը»...

Նրա ձայնին ոչ ոք օգնութեան չը հասաւ:

Միայն ծերունու աղաղակը և այն սաստիկ ցնցումը, որ գործեց նա խանի մարմնի վրա, այն հետևանքն ունեցան, որ խանը լուսնահարի նման արթնացաւ, և չը յիշելով ծերունու մի քանի րոպէ առաջվայ գործողութիւնները, այնքանը միայն զգաց, որ իր կոկորդը գտնվում է նրա ճանկերի մէջ: Զօրեղ ձեռքով նրան մի կողմ գլորեց և ինքը վեր կացաւ, ասելով.

—Ճանաչիր քո տիրոջը, անզգամ:

Այդ խրոխտ ձայնի մէջ ծերունին ճանաչեց խանին, բայց նախասենեակի մթութեան մէջ չը կարողացաւ տեսնել նրա ցեխի մէջ թաթախված ջորեպանի հագուստը:

—Հեռացիր այստեղից, հրամայեց խանը և մտաւ տիկնոջ սենեակը:

Սարսափած ծերունին ոտքը դուրս դրեց նախասենեակի շէմքից. բայց յանկարծ յիշեց իր սղոցի Թեփով լցրած բարձը և վերարկուն: Նա դողդողալով յետ դարձաւ, վեր առեց իր գիշերային անբաժան ընկերները և հեռացաւ:

Նրա մէջ այժմ տիրապետում էր մի զգացմունք միայն, մահուան և դատապարտութեան զգացմունքը: Նա յիշեց ներքինապետի խօսքերը, որ տիկնոջ փախուստի լուրը առնելու ժամանակ ասաց նրան. «խանը քեզ կրակի մէջ կենդանի այրել կը տայ»... իսկ այժմ իր յանցանքը աւելի ծանրացաւ: Նա բռնեց խանի կոկորդից, նա ապտակեց նրան: Բայց ինչու չը հրամայեց նա իսկոյն կտոր-կտոր անել, իսկոյն խեղդել իր անզգամ ծառային: Այդ միտքը սաստիկ տանջում էր ծերունուն: «Ես արժանի եմ մի այսպիսի պատժի», մտածեց նա և առանձնացաւ կանանոցի մի անկիւնում, նստեց, խոնարհաբար սպասում էր իր դատապարտութեան րոպէին:

Խանը մտնելով տիկնոջ սենեակը, գտաւ նրան իր գեղեցիկ, վայելչական կարգուսարքի մէջ: Այնտեղ դեռ վառվում էր ճրագը, տարածելով իր շուրջը բաց-վարդագոյն լուսաւորութիւն, որ արտափայլում էր նոյն գոյնով թափիչեայ վարագոյրներից: Սիրելի խանումի սենեակում ամեն ինչ իր տեղումն էր. թէ փափուկ մութաքաները ոսկեայ փունջերով, թէ նախշուն օթոցները, և թէ արծաթեղէն կամ հաղուագիւտ չինապակիից կազմված անօթները, բոլորը, բոլորը իրանց պատշաճաւոր տեղերն էին բռնած: Միայն պակաս էր սենեակի թագուհին:

Ամրոցի իշխանը այժմ գտնվում էր իր տան մէջ, բայց որպէս մի յանցաւոր, որպէս մի փախստական, որ ոչ ոքին երևնալու համարձակութիւն չունի: Նա կանգնած էր ոտքի վրա, և իր ջորեպանի ցեխոտ հագուստով մինչև անգամ չէր համարձակվում մերձենալ այն գեղեցկութիւններին, յոց տներին լուսաւորչական եկեղեցիներում մատաղներ անելու, իրանց պապերի գերեզմանների վրա հայ հոգեւորականներին հոգեհանգիստ կատարել տալու, վերջապէս նոյն իսկ նրանց գիւղերի բուն հայոց անունները, ինչպէս Ագարակ, Ամրագոմ, Պատնաշէն, Քարեկամուրջ, Սուրբնշան և այլն,—այդ բոլորը ցոյց է տալիս թէ կան բազմաթիւ հայ-մահմետականներ մեր երկրում։ Ղարսի նահանգը ճանաչողներից ոմանք իրանց մասնաւոր կերպով արած հետազօտութիւնների հիման վրա վկայում են, որ Ղարսի նահանգի մահմետական ազգաբնակութիւնը գրեթէ ամբողջութեամբ հայոց ծագումից է. ինչպէս Ղարսի նահանգի բոլոր թիւրքերն էլ հայ-մահմետականներն են։

Այժմ թող մեզ պատասխանի „Кавказъ" լրագրի Մահմետական յօդուածագիրը. արդեօք հայոց թերթը նոյնքան իրաւունք չունի հետաքրքրուել մահմետականների հոգեւոր գլխի նշանակութեամբ, որքան և ինքն պարոն յօդուածագիրը, որ ինքն մահմետական ստորագրելով, հաւատացած է որ մեր երկրի մահմետականների մասին հետաքրքրուելու գործը միմիայն իր սեփական արտօնութիւնն է։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԲՆ

Թիֆլիս, 15 յունվարի

Թիֆլիսի երկրորդ կարգի վաճառական պ. Գալուստ Ղարիբեանի հիւրասիրութիւնը դարձեալ առիթ տուեց մեզ մի փոքրիկ հանգանակութիւն անել բարեգործական նպատակով։ Դարձեալ եմ ասում. որովհետև անցեալ տարի ևս Ծննդից յետոյ նրա տանը յաջողվեցաւ մեզ մի փոքրիկ գումար ժողովել յօգուտ Վանայ սովելոց, որը հրատարակվեցաւ իր ժամանակին ձեր պատուական օրաթերթի էջերում։

Այժմ ևս ամսոյս 10-ին, երբ պարոնից հիւրասիրված մի քանի անձինք համախմբված էին նրա տանը, ի թիւս որոց և մեր Մուղնու եկեղեցու միաբան քահանայքը, երբ ճաշի առատ կեր ու խումի ժամանակ դարձեալ մեծ համակրութեամբ նուիրվում էին բաժակներ ազգիս անմահ բարերարների, նրա անխոնջ մշակների յիշատակը պատուելու համար կեցցէներ և բարեմաղթութիւններ վեր ուղղելով, հարկ համարեցի ինձ ներողութիւն խնդրելով մեր պատուարժան եղբայրակից քահանաներից, մի քանի բառով բացատրել թէ ովքեր են համարվում ազգիս մշակները և բարերարները։ Խօսքս փոխելով հայոց նորահաստատ բարեգործական ընկերութեան վրա, ասացի, որ նրանք, այսինքն նրա համար գործող տարերը ևս ազգիս անխոնջ մշակներ են, որոնք գործում են ինքնայորդոր կամքով, առանց կողմնակի պարտաւորիչ ույժերի ներգործութեան, որոնք ոչ միայն չեն խնայում իրանց ժամանակը, իրանց թարմ ույժերը, այլ զոհում են իրանց գրպանից, իրանց քրտնարիւն վաստակից, յօգուտ այդ ընկերութեան։ Ցոյց տանք պարոններ, որ յարգում և պատւում ենք այդ ազգաշէն նպատակը, ապացուցանենք որ չենք խնայել և չենք խնայելու նուիրել մեր աղքատիկ լուման յօգուտ մեր եղբայրների։

Մեծ յօժարութեամբ նպաստեցին այս խօսքերին մեր պատուարժան եղբարքը—հայր աւագ քահանայ Արիս. Բէնքլեանը և հայր Յովհ. Տէր-Գրիգորեանը։ Ժողովեցաւ երեսուն և հինգ րուբլի, որից 10 ր., ինքը տանուտէր պ. Գ. Ղարիբեանը, իսկ ութը նրա որդի պ. Կարապետը նուիրեցին։

Թող այս տողերը անձնավստահութիւն չը համարվեն. ես միայն պ. պ. Ղարիբեանները օրինակ բերելով համարձակվում եմ ասել, որ նրանք միշտ յարգելի են և պէտք յարգվեն այսպիսի գործ սիրողներից, թող այս և սրա նման դէպքերից օրինակ առնեն մեր հայերի այն մեծամասնութիւնները, որոնք հարիւրաւոր հրաւէրքներում ներկայ լինելով, իրանց որկորն են պաշտում և երգիչներին «չաբաշ» ընծայում. իսկ երբ մի այսպիսի խնդիր կարծարծես, այն ժամանակ հազարաւոր տրտունջներ և մեղադրանքներ կը թափեն վրադ... բայց հեռի մեզանից վհատութիւն. ուր որ լինենք, բարի գործը յարգել, բարի գործի համար զոհել կը քարոզենք։

Յարգոյ խմբագիր. ահաւասիկ այս տողերի հետ ուղարկում ենք երեսուն և հինգ րուբլի, խնդրելով դրամը հասցնել Թիֆլիսի հայոց Բարեգործական խորհրդին, իսկ ծանուցագիրը հրատարակել ի գիտութիւն ընթերցողներիդ, եթէ միայն հրատարակութեան արժանի կը դատէք։

Մուշեղ քահանայ Տէր-Ղևոնդեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Փօթի, 19 յունվարի

Ուղարկելով ներկայիս խմբագրութեանդ 10 րուբլ, որ նուիրած են հետեւեալ պարոնները մէկ-մէկ րուբլի. Գրիգոր Ղամպարեան, Յովակիմ Պետրոսեան, Աղան. Նազարեան. Արիստ. Թիւրքեան, Տիգր. Աբրահամեան, Բարթ. Սամանձեան, Տիգր. Վանցեան, Անյայտ ոմն, Ղազ. Տէր-Ղազարեան, և ես, խնդրեմ բարեհաճէք սոյն գումարով Տրապիզոնի, կամ որտեղ որ կամիք հռոմ., լուսաւ. կամ աւետա. հայոց դպրոցներու մէկին այս տարի «Մշակի» մէկ օրինակը խաւրել, որի համար մեր կանխաւ շնորհակալութիւնը ձեզ կը յայտնեմք։

Ա. Քէօմիւրճեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ախտի ամրոց, 2 յունվարի

Բարուտչեվի Թիֆլիսում եղած բանկային գրասենեակի հետ համաձայնութիւն կայացնելով անցեալ տարվայ ապրիլին, ես ուղարկեցի հինգ րուբլիանոց երկու կուպօններ 5% արժէթուղթ ապահովելու համար տիրաժի դէմ անցեալ տարվայ սեպտեմբերի 1-ից մինչև 1885 թ. մարտի 1-ը, այսինքն ութ տիրաժի համար իւրաքանչիւրը 60 կ.։ Փողը ստանալուց յետոյ Բարուտչեվ պահանջեց դարձեալ երեք րուբլ, կամ թէ միջին թւով 1 րուբլ իւրաքանչիւր տիրաժին։ Այդ գինը միւս բանկերի պայմանների համեմատ շատ թանգ է։ Չը համաձայնելով Բարուտչեվի հետ, ես կուպօնները յետ պահանջեցի փոստի ծախսը հանած կամ թէ, պայման գրի, վճարը աւելացնել, եթէ միւս բանկիրները ապահովութեան գները կաւելացնեն։ Մինչև այժմ իմ բոլոր խնդիրները առանց պատասխանի են մնացել. ոչ փող եմ ստացել և ոչ նամակ։

Անցեալ տարվայ սեպտեմբերին ընկերներիս հետ փող հաւաքելով, ուղարկեցի իմ կողմից ծըխախոտի գործարանատէր Հ. Էնֆիանջեանցին (Դըվօրցօվայա փողոց, Գալերէյ Արծրունի) 12 ր. ծըխախոտ ուղարկելու համար։ Այդ փողերի հետ ուղարկեցի և Բարուտչեվի նամակը և խնդրեցի նամակի համեմատ ստանալ նրանից 5 րուբլ և աւելացնել ծխախոտի համար ուղարկված փողերին։ Բայց պ. Էնֆիանջեանցն էլ Բարուտչեվի պէս վարվեց։ Անցան չորս ամիսներ և իմ անդադար խնդիրքները առանց պատասխանի մնացին։

Մենք, այսինքն մեր փոքրիկ հասարակութիւնը այնպիսի յետ ընկած տեղ է ապրում, որ առաջին հարկաւորութեան առարկները դժուարութեամբ և մեծ գնով են ձեռք բերվում։ Այդ դրութիւնը թեթեւացնելու համար մենք ստիպված ենք լինում փոստով դիմել ուղղակի գործարանատէր-վաճառականներին և հազարաւոր վերստների հեռաւորութիւնից կոպէկանոց առարկայ բերել տալ, որովհետև նա անհրաժեշտ է։

Դիմում եմ ձեզ, պ. խմբագիր, խնդրելով չը մերժել տեղ տալ նամակիս ձեր յարգելի լրագրի մէջ, որպէս զի ուղղակի պատասխան ստանամ պ. պ. Բարուտչեվից և Էնֆիանջեանից, թէ նրանք ինչ գումարի վրա են աւելացրել մեր փողերը։ Ես աւելի լաւ համարեցի դիմել ձեզ, պ. խմբագիր, ի նկատի առնելով, որ դուցէ պ. պ. Բարուտչեվ և Էնֆիանջեանց չեն կարդում ռուսաց լրագիրները և այն ժամանակը իմ ձայնը կը մնար ձայն բարբառոյ յանապատի։

Կոնստանտին Մալինօվսկի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ղազան, 9 յունվարի

Ուղարկելով ձեզ այս 43 րուբլին, որ ժողովեցի Ղազանի սակաւաթիւ հայերի մէջ յօգուտ Կ. Պօլսի բեռնակիրների Լուսաւորչեան ընկերութեան, պատիւ ունեմ խոնարհաբար խնդրել ձեզ, հասցնելով այս գումարը կամ, եթէ աւելի յարմար կը գտնէք գրքեր այս գումարի, վերոյիշեալ ընկերութեանը, նուիրել մի քանի չարք ձեր պատուական թերթում հետեւեալ անձանց անուններին, որոնք ուրախութեամբ յօժարեցին մասնակցել առաջարկած ստորագրութեանս. Սիմէօն Բակիրեան 5 ր., Գրիգոր Գաղաչեան 3 ր., Մանուշակ Գաղաչեան 1., Վարդան Սերեբրեակեան 5 ր., Նունէ Պատուականեան 3 ր., Սիմէօն Պատուականեան 4 ր., Աւետիս Գեանջեան 2 ր., Միքայէլ Եարեան 2 ր., Կոնստանտին Սապարեան 2 ր., Գէորգ Մելքօնեան 3 ր., Սիմէօն Խայեան 2 ր., Աւագ Լալաբէգեան 2 ր., Նիկողայոս Շահնազարեան 3 ր., Յովհաննէս Թումայեան 2 ր., Բաղդասար Պօպօվեան 1 ր., Դաւիթ Ջերքեզեան 1 ր., Աղեքսանդր Սարքսեան 1 ր., Կ. Սամուրեան 1 ր.։ Ընդամենը 43 ր.։

Կ. Սամուրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՓՕԹԻՑ ստացած 10 րուբլ գումարով կուղարկենք «Մշակի» մի օրինակ Ալէքսանդրօպօլի հայկաթօլիկ դպրոցին։

—

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ։ «Յունվարի 13-ին կայացաւ ուսանողական ներկայացումը յօգուտ չքաւոր ուսանողների։ Տրվեցաւ Սունդուկեանցի «Պէպօ» պիէսան։ Սիրողները շատ աջող կերպով խաղացին։ Հասարակութեան առանձին ուշադրութիւնը և համակրութիւնը իրանց խաղով գրաւեցին պ. Պ. Քալանթարեան, Արութինի դերում և օր. Վարդանեան Շուշանի դերում։ Շատ լաւ էին նոյնպէս օր. Էգէլեանեան, Էփէմիայի դերում և օր. Թամամշեան, Կեկելի դերում։ Գիքօի դերը խաղում էր պ. Բաշինճաղեան, Պէպօյի պ. Լիսիցեան, Կակուլիի պ. Թէյմուրազեան և Գիգօլիի պ. Գաբրիէլեան։ Հասարակութեան մէջ կային բաւական շատ օտարազգիներ, որոնք հե-

---

որոնցմով շրջապատված էր ինքը։ Նա աչքերը յառած, խորին տխրութեամբ նայում էր այն օթոցին, ուր իր մօտ նստած էր նոյն գիշերը խանումներից ամենագեղեցիկը և ամենախելացին։ Յիշեց նրա սքանչելի դէմքը, մտաբերեց նրա լի ճշմարտութիւններով խօսքերը։ Այստեղ, այս օթոցի վրա նստած, նա, որպէս մի անողոք մարգարէուհի, կարդում էր բռնակալի ճակատագիրը, բացատրում էր նրա խաբուսիկ վիճակը։ Խօսում էր ընտանիքի և ամուսնական սիրոյ վրա։ Ա՜խ, որքան իմաստալից, որքան խորախորհուրդ էին նրա խօսքերը։ Ինքն այն ժամանակ չը հասկացաւ, և եթէ հասկացաւ, բարկութիւնը, հպարտութիւնը, եսականութիւնը թոյլ չը տուեցին խոստովանել նրանց ճշմարտութիւնը։ Ա՜խ, եթէ այժմ այստեղ լինէր այն մարգարէուհին։ Նա պատրաստ էր գրկել նրա ոտները, համբուրել, և նրա ոտների առջև խոստովանել, թէ ինքը մարդկային ծնունդներից ամենաթշուառը և ամենահրէշաւորն է։ Բայց նա չը կար. նրա փոխարէն գրկեց այն անուշահոտ բարձը, որի վրա գեղեցիկ գլուխը դրած, նա քնած էր այն գիշեր,—գրկեց, և իր երեսը սեղմելով նրա վրա, սկսեց թափել դառն արտասուքներով...

Այդ ինչ զգացմունք էր. ինչու էր տանջվում. ինչու էր այնպէս սպանված նա։ Այն րոպէում, երբ կորչում, ոչնչանում էին՝ փառք, մեծութիւն, իշխանութիւն, երբ նրա ամբողջ զօրութիւնը խորտակվում էր թշնամու ուժի առջև, երբ իր կեանքն անգամ սոսկալի վտանգի մէջ էր,—նա ոչինչ չէր ափսոսում, ոչինչ չէր մտաբերում, մտաբերում էր միայն այն կնոջը, որը այնպէս անխնայ կերպով յանդիմանեց նրա գաղանութիւնը, թէ իր տան և թէ իր իշխանութեան մէջ։

Եօթն տարվայ ստրկուհին միանգամ միայն բաց արեց փակված լեզուն, միանգամ միայն խօսեց ճշմարիտը ու արդարը, և միանգամից գրաւեց իր բռնապետի սէրն ու յարգանքը։ Բայց մի՞թէ այդ հասկանում էր նա։ Նա ոչինչ չէր հասկանում, միայն զգում էր։

Նա զգում էր, որ սիրելի կնոջ ներկայութիւնը, նրա մի խօսքը, նրա մի ժպիտը կարող էր մխիթարել նրան, կարող էր փարատել նրա բոլոր թշուառութիւնները։ Բայց նա չը կար։ Նրան կորցնելով, ամեն ինչ կորցրեց նա...

Նա գլուխը վեր բարձրացրեց աննման կնոջ բարձի վրայից, և սոսկալով վեր թռաւ, որպէս մի անարժան, անմաքուր էակ, որ չէ համարձակվում իր հպաւորութեամբ պղծել մի որ և իցէ սրբութիւն։ Կանգնեց ոտքի վրա։ Այժմ վայրենի կերպով նայում էր իր չուրջը և ականջ էր դնում։

Հրանօթների ձայնը սկսեց աւելի մօտից լսելի լինել։ Թշնամին մերձենում էր ամրոցին։ Բայց ինչ էր մնացել այդ գեղեցիկ, հոյակապ շինվածքից։ Բոլորը լափեց կրակը։ Մնում էր միայն հարեմը—կնիկների ընտիր հաւաքածուն։ Ամեն բան կարելի էր տալ թշնամու ձեռքը, իսկ այդ հաւաքածուն—ոչ։

Մի փոքր հեռու, փողոցներում, կոտորածը դեռ շարունակվում էր։ Շուտով նոյն բարբարոսութիւնը սկսվելու էր և այստեղ—կանանոցում։

Բայց այստեղ չէին կոտորի, այստեղից գերի կը տանէին։ Այդ աւելի սարսափելի էր։ Խանը չէր կարող համբերել մի այսպիսի անարգանքի, որ այն կնիկները, որոնց ինքը գրկել էր, որոնց Աստուած ստեղծել էր միայն նրա հաճոյքի և զուարճութեան համար,—պատկանէին մի ուրիշին, կամ մի օտար մարդու ձեռքը շօշափէր նրանց։

Դառն իրականութիւնը դարձեալ խռովեց, դարձեալ գրգռեց նրա երեւակայութիւնը։ Նրան երեւում էր, թէ իր կնիկներին կիսամերկ, ոտաբոբիկ, թօկերով կապած, անասունների նման կանգնեցրել էին մի մեծ քաղաքի հրապարակի վրա և վաճառում էին։ Նրան երեւում էր, որ իր զաւակները, պատառոտած հագուստներով, թափառում էին նոյն քաղաքի փողոցներում և անցնողներից ողորմութիւն էին խնդրում։ Իսկ ինքը, մի կթոց շալակած, պտըտում էր դռնից-դուռ, և ողորմելի ձայնով աղաղակում էր, որ իրան աղբ կամ մի այլ բան տան դէն ածելու։

Հրանօթների ձայնը այժմ աւելի մօտից սկսեց լսելի լինել։ Կանանոցի մէջ բարձրացաւ խառնաշփոթ աղմուկ։ Ամբողջ շինվածքը դղրդում էր։ Կարծես թէ, դռները խորտակում էին։

Նա դողդոջուն ձեռքով վեր առեց ճրագը և մի քանի րոպէ փետացածի նման մնաց անշարժ։ Մի սոսկալի խորհուրդ ալեկոծում էր նրա սիրտը։ Նա տարուբերվում էր անվճռականութեան մէջ, որպէս մի կատաղի եղեռնագործ, որ պատրաստվում է կատարելու մի մեծ յանցանք։ «Թող նզովեալ լինի սատանան»... ասաց նա և իր քայլերը ուղղեց դէպի դուռը։

Ճրագը ձեռքում նա անցաւ կանանոցի բակը, մտաւ մի փոքրիկ տալան, այստեղից մտաւ մի բաւական ընդարձակ սենեակ, որի բանալին իր մօտ ունէր։ Դա նրա առանձնասենեակն էր։ Ներս մտնելուց յետոյ կրկին կողպեց դուռը։ Մօտեցաւ այն փառաւոր օթոցին, որի վրա սովորաբար նստում էր ինքը։ Ոտքով օթոցը մի կողմ հեռացրեց, թեքվեցաւ և մատով սեղմեց մի փոքրիկ երկաթեայ տախտակ, որը ճռնչալով վեր բարձրացաւ։ Տախտակի տակում բացվեցաւ մի նեղ ճեղք, որի մէջ մի բանալի հազիւ կարող էր շարժվել։ Նա հանեց իր քսակից մի այլ բանալի, անցկացրեց ճեղքի մէջ, մի քանի անգամ պըտոյտ տալուց յետոյ, ծանր, երկաթեայ դռնակը յատակից ինքնիրան վեր բարձրացաւ, և բացվեցաւ մի մթին և նեղ անցք, որտեղից մի մարդ հազիւ կարող էր մուտք գործել։ Նա ճրագը ձեռքում սկսեց փոքրիկ սանդուղքներով ցած իջնել։

Սանդուղքները տանում էին մի երկար, ստորերկրեայ շինուածքի մէջ, որ ամենեւին լուսամուտներ չունէր։ Այդ շինուածքը փորված էր ապառաժի մէջ և ծածկված էր ահագին կամարներով։ Նա աւելի բնական քարանձաւի ձև ունէր, քան մարդկային արհեստի կերտուածքի։ Նրա վերին յարկում գտնվում էր ամբողջ կանանոցը։ Այստեղ խանը պահում էր իր գանձերը։ Բայց բերդի պաշարվելու ժամանակ նա տեղաւորեց այնտեղ, տոպրակների մէջ լցրած, մի նոր մթերք։ Ի՞նչ էր նա—ոչ ոք չը գիտէր։ Նա թողեց ոսկով և արծաթով լի արկղիկները և մօտեցաւ այդ տոպրակներին։ Ճրագը մի կողմ դրեց և ինքը չոքեց խոնա յատակի վրա։ Նրա դէմքը այժմ արտայայտում էր սրտի խորին հանդարտութիւն, որպէս մի մարդ որ արդէն հաշտվել էր իր խղճի հետ։ Նա իր պղտոր աչքերը բարձրացրեց դէպի երկինքը և լռութեամբ կարդաց մի կարճ աղօթք։ Յետոյ վեր առեց ճրագը և սառնասրտութեամբ մօտեցրեց տոպրակներից մէկին։ Նոյն վայրկենում ստորերկրեայ շինուածքը սոսկալի բոմբիւնով որոտաց և ամբողջ կանանոցը բարձրացաւ, ցնդեց օդի մէջ...

(Կը շարունակվի)

տեսում էին պիէսային ռուսերէն գրված Լերմոնտովի օգնութեամբ: Ներկայացման ժամանակ, դահլիճներից մինում տեղաւորված էր պ. Փիրքճեանի ֆոտօգրաֆիական ժողովածուն, որ հիացրեց բոլոր ներկայ գտնվողներին: Ներկայացումից յետոյ եղան պարեր, որ ժամի 4-ին վերջացան:»

—

Մեզ գրում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ, որ յունվարի 2-ին հայ սիրողները այդ քաղաքում, մասնակցութեամբ պ. Ալաբեանի, ներկայացրին յօգուտ աղքատների «Ելէօնօրա» դրաման 5 գործողութեամբ, թարգմանութիւն ֆրանսերէնից: Թատրօնը համարեա լի էր: Թղթակիցը մեզ գրում է որ վերջին ժամանակները հայոց ներկայացումները բաւական յաճախ են լինում Աստրախանում: Վերջին ներկայացման ժամանակ, ինչպէս գրում են մեզ, նահանգապետ կոմս Բախմետօվ-Պրոտասօվ նուիրեց 25 րուբլ:

—

Աստրախանից մեզ գրում են: «Այս օրերս մեր քաղաքային Դումայի մէջ պիտի քննվի մի ձայնաւորի առաջարկութիւնը, շինել երկաթուղագիծ Աստրախանից մինչև Ցարիցին: Դա շատ կարևոր հարց է մեր վաճառականութեան համար:»

—

Պ. Գրիգոր Շահբուդաղեան խնդրում է մեզ յայտնել հետևեալը: «իմ Թարգմանած և Նորերումս լոյս ընծայած «Մայրական Դաստիարակութիւն» գրքի վերջում այլ և այլ պատճառներով չը կարողացայ տպագրել հետևեալ յարգելի բաժանորդների ազգանունները. օր. Մարիամ Արէչեան, տիկիններ Կատարինէ Աղասի և Թամար Կաճկաճեան, պ. պ. եղբարք Իզմիրեաններ. Գրիգոր Աղասի և Աւետիք Թանդօյեան, որոնք չը զլացան ըստ չափու կարողութեան օգնելու գըրքոյկիս հրատարակութեանը և որոնց հրապարակաւ մատուցանում եմ իմ խորին շնորհակալութիւնս:»

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ որ յունվարի 8-ին ռէալական դպրոցի բարձր դասատան աշակերտները Մարդասիրական ընկերութեան դահլիճում բարեգործական նպատակով ներկայացրին «Անխոհութիւն» և «Փլատ» պիէսաները:

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են: «Այս օրերս մի տան մէջ հանդիպեցայ մի պառաւ հայ կնոջ: Հետաքրքրվելով իմանալու թէ դա որտեղացի է, հարցրի. «Մայրիկ, դու որտեղացի ես:—«Ես սամաղարցի լէմսա եմ» եղաւ պատասխանը:—Ուրեմն, դու հայ չես, դարձեալ հարցրի ես.... Եւ դարձեալ պատասխանն եղաւ թէ հայ չէ, այլ լէմսա է: Այդ ինձ շատ զարմացրեց. միթէ Սամաղար գիւղի բոլոր հայ-աւետարանականները իրանց հայ չեն համարում, այլ գերմանացի են կարծում իրանց, կամ գուցէ այդ իմ տեսած պառաւ կնոջ բացառութիւն էր կազմում:»

—

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են: «Ասում են որ «Մշակը» անտեղի է քննադատում հոգևորականութեանը: Բայց ինչ կասէք, եթէ իմանաք որ վերջին օրերս այստեղ քահանայ են ձեռնադրվել՝ ղաթրչի, բօստանչի, զուռնաչի և այլ այդ տեսակ տգէտ, անզրագէտ մարդիկ: Եւ դրանք վաղը մեր քարոզիչներ, հովիւներ են դառնալու:»

—

Ստացանք յօգուտ Թիֆլիսի Բարեգործական ընկերութեան 35 րուբլ հայր Մուշեղ Տէր-Ղևոնդեանցի ձեռքով: Այս փողը կը հասցնենք անմիջապէս ընկերութեան խորհրդի նախագահին կամ գանձապահին, բայց այնուհետև խնդրում ենք այլ ևս չուղարկել մեզ փողեր այդ ընկերութեան անունով, քանի որ ուրիշ շատ փողերի հաշիւներ ունինք պահելու և ժամանակը մեզ չէ ներում այդ ընկերութեան համար էլ նուիրատուութիւններ ընդունելու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„РУССКІЙ КУРЬЕРЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

„Русскій Курьеръ“ լրագրին Կ. Պօլսից գրում են: Թիւրքերի կասկածոտութիւնը քրիստոնեաների վերաբերութեամբ բոլորովին չէ նուազում: Օրերումս ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մի մասնաժողով հիմնեց մայրաքաղաքի մէջ հրատարակվող գրքերը քննելու և տպարանների վրայ հսկելու համար: Այդ մասնաժողովի անդամներից ոչ մէկը քրիստոնեայ չէ: Թիւրքաց ուսումնարանների մէջ կրօնական ֆանատիկոսութիւնը դարձեալ մեծ պատիւ ունի: Կը հաւատաք, որ կայսերական ձեմարանի կառավարչի կարգադրութեան համեմատ նրա աշակերտները պարտաւոր են օրական հինգ անգամ գնալ մզկիթ և աղօթել ու լուացվել:

Նոր տարվայ համար սուլթանը իր հայ հպատակներին շատ գեղեցիկ ընծայ արաւ: Նա հրամայեց արձակել Խեռ բանտից քիւրդ աւազակների առաջնորդին և նրան Հայաստան վերադարձրեց: Ինքը սուլթանը այդ աւազակին սիրալիր ընդունելութիւն գործեց, ցոյց տուեց նրան իր ողորմութիւնը և խոստացաւ վարձատրել այն անիրաւութեան և վիրաւորանքի համար, որին ենթարկվեցաւ նա և իր ընկերները: Այն «անիրաւութիւն» անունը, որ ինքը սուլթանը տուեց Աբբեդին փաշայի եռանդոտ վարմունքին, անկասկած չէ կարող ուրախացնել Թիւրքիայի քրիստոնեայ բնակիչներին: Երկու տարի սրանից առաջ Աբեդին-փաշայ, որ ուղարկված էր Հայաստան այնտեղ վերանորոգութիւններ մտցնելու համար, հարկաւոր համարեց Դիարբէքիրի նահանգից արտաքսել բազմաթիւ քիւրդերին, որոնց խղճի վրայ ծանրանում էին սպանութիւններ և շատ ուրիշ յանցանքներ: Այս կարգադրութեան շնորհիւ այդ նահանգի բնակիչները կարողացան վերջապէս ազատ շունչ քաշել: Եռանդոտ նահանգապետի անունը յայտնի եղաւ Եւրոպայի մէջ: Այսօր սուլթանը ուշադրութեամբ և ողորմութեամբ վերաբերվում է այդ աքսորականներին: Երբ այդ առիթով ես յայտնեցի իմ զարմանքը Թիւրք պալատականներից մէկին, նա ժպտալով ինձ հետևեալ պատասխանը տուեց. „Դուք մի՞թէ երբէք չէք լսել, որ կան այդպէս անուանված պետական անփախչելի պահանջներ: Բ. Դուռը, այդ քիւրդերին շրջքորդելուց յետոյ հայրենիք ուղարկելով, շատ խելացի է վարվում: Մի՞թէ դուք չը գիտէք, որ այդ քիւրդերին կալանաւորելը քաղաքական նշանաւոր սխալ էր: Առանց հայերին մեր կողմը գրաւելու, մենք գրգռեցինք մեր դէմ քիւրդերին և կորցրինք մեր հեղինակութիւնը նրանց աչքում: Դրանք սկսեցին մտածել, որ հայերը վայելում են Եւրոպայի հովանաւորութիւնը և որ նրանք կարող են ստիպել մեզ օրէնքներ հրատարակել: Հէնց որ քիւրդերը վերջնականապէս այդ բանին կը հաւատան, նրանք անյապաղ կը միանան հայերի հետ: Դուք հասկանում էք այժմ, որ այդ գործը ցանկալի չէ կարող լինել Թիւրքիայի համար, որովհետև հայ-քիւրդական դաշնակցութիւնը կարող է խլել մեզանից Ասիան: Մենք ակամայ ամեն բան պէտք է անենք այդ համաձայնութիւնը խանգարելու և քիւրդերին մեր բարեկամ պահելու համար: Հաւատացած եղէք, որ մենք այսուհետև այլ ևս այդպիսի յիմարութիւններ չենք անի և չենք հալածի քիւրդերին կամ մահմեդական միւս ցեղերին:“

Թիւրքաց մամուլն էլ իր կողմից դրականապէս յայտնում է, որ Բ. Դուռը միայն գարնանը կը սկսի քննել Հայաստանի մէջ մտցնելի վերանորոգութիւնները: 'Ի նկատի առնելով Թիւրք կառավարութեան այդպիսի դիտաւորութիւնները և Թիւրք հասարակութեան տրամադրութիւնը, հայոց պատրիարքն էլ իր համար անկարելի է համարում յետ առնել իր հրաժարականը: Այստեղ ամենքը համոզված են, որ հայ հոգևորականութեան փոքր ի շատէ օրինաւոր անդամներից ոչ մէկը չի համաձայնվի պատրիարքական գահը բարձրանալ, մինչև նա սուլթանից որոշ խոստմունք չի ստանայ Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածի իրագործման մասին: Լօրդ Դիւֆերին խնդրել է սուլթանից տեսակցութիւն նշանակել հայոց խնդրի վերաբերութեամբ բանակցելու համար: Սուլթանը պատասխանեց, որ նա ուրախ է տեսնել Մեծ Բրիտանիայի ներկայացուցչին և խօսել նրա հետ ամեն տեսակ առարկաների մասին, բացի այդպէս անուանված հայոց խնդրից: Շատերը կարծում են, որ անգլիական դեսպանը օգուտ կը քաղէ սուլթանի նշանակած տեսակցութիւնից եգիպտական գործերի պատճառով, որպէս զի ցոյց տայ նրան այն վնասը, որ պատճառում է Թիւրքիային Հայաստանի մէջ վերանորոգութիւնների յետաձգելը: Բայց այնուամենայնիւ տեսակցութեան գլխաւոր առարկան Եգիպտոսը կը լինի:

Թիւրքերը Անգլիային հետզհետէ անհաւատարմութեամբ են վերաբերվում: Լօրդ Դիւֆերին իր տեսակցութեան ժամանակ կաշխատի մեկնել սուլթանին, թէ որքան նա անիրաւացի է, չը հաւատալով Անգլիային և թէ ինչպիսի օգուտներ կարող էր Թիւրքիան ունենալ Թիւրք-անգլիական համաձայնութիւնից: Ցաւաբաղդաբար շատ քիչ յոյս կայ, որ տաղանդաւոր քաղաքագէտի աշխատանքները աջողութեամբ պսակվեն: Գերմանիայի ազդեցութիւնը Թիւրքիայի վրայ առաջնակարգ նշանակութիւն ունի: Դեռ նորերումս մի անհաւատալի լուր տարածվեցաւ, որ Թիւրք մինիստրութիւններից երեքը պէտք է գերմանացիներին յանձնվեն. այսօր մի ուրիշ, աւելի հաւանական նորութիւն յայտնվեցաւ: Անգլիական օֆիցերների պայմանաժամը Թիւրք ժանդարմերիի կազմակերպելու համար արդէն լրացաւ, այդ պայմանը չի վերանորոգվի և անգլիացիներին գերմանացիք կը փոխարինեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Presse» լրագրին Սօֆիայից հեռագրում են յունվարի 7-ից, որ բուլղարական կառավարութիւնը սերբիական դիպլօմատիական գործակատարից մէկ շրջաբերական ստացաւ, որի մէջ նա սպառնում է դիպլօմատիական յարաբերութիւնները կտրել, եթէ Բուլղարիան չի վճռի սերբ-բուլղարական սահմանի վիճելի հարցերը:

—Անգլիական լրագիրները հաղորդում են, որ ռուս-հրէական յանձնաժողովի կողմից, Լօնդօնի ռուսաց դեսպանութեամբ մէկ խնդիրք է յանձնված, ներկայացնելու Ռուսաց կայսրին, որի մէջ խնդրում են պաշտպանել Ռուսաստանում ապրող օտարականների թէ կեանքը և թէ կայքը: Շուտով ժողով կը կայանայ Մանշիօն-Հաուզում, լօրդ-մէրի նախագահութեամբ, ուր ներկայ կը գտնվեն Անգլիայի պետական նշանաւոր գործիչներ և նրանց թւում Կենտրբէրիի արքեպիսկոպոս, կարդինալ Մանինգ, լօրդ Շաֆտսբէրի, օկսֆօրդեան արքեպիսկոպոսը, վեստմինստէրեան դեկանը և ուրիշները այդ գործը քննադատելու համար:

—«Presse» լրագիրը յունվարի 10-ից հետևեալ հեռագիրը ստացաւ Սալօնիկից: 15 ալբանացիներ և 7 բուլղարացիներ, որոնց թւում գտնվում է մէկ քահանայ, կալանաւորվեցան և Կ. Պօլիս ուղարկվեցան: Նրանք մեղադրվում են Մակեդօնիայում եղած յուզմունքներին մասնակցելու մէջ:

—Լրագիրների մէջ կարդում ենք, որ իտալական պատգամաւորների ժողովը, յունվարի 21-ի նիստում, ընդունեց 217 ձայների մեծամասնութեամբ 64-ի դէմ, ընտրողական վերանորոգութիւնը համաձայն սենատի արած փոփոխութիւններին: Յայտնվեցաւ, որ չը նայելով նիստի մեծ նշանակութեանը, համարեա պատգամաւորների կէսը ներկայ չէր: Կիրակի, յունվարի 22-ին, «Պաշտօնական Լրագրում» արդէն հրատարակված է նոր օրէնքը:

—Լօնդօնի «Daily Telegraph» լրագրի խօսքերին նայելով, Պարնէլ և պարլամենտի մի քանի ուրիշ իրլանդական անդամները հրաժարվեցան խօսք տալուց այլ ևս չը մասնակցել իրլանդական խռովութիւնները գրգռելու մէջ, և այդ պատճառով, պարլամենտական պարապմունքների ժամանակ արգելված կը լինի նրանց մտնել պատգամաւորների ժողովը:

—«Daily News» լրագրին Դամիէտտից, յունվարի 9-ից հեռագրում են, որ այդ քաղաքում քրիստոնեաների և մահմեդականների մէջ կռիւ ընկաւ: Բնակիչները յուսահատութեան մէջ են: Հիւպատոսները խորհրդակցում են և միջոցներ են որոնում մահմեդականների ֆանատիկոսութիւնը զսպելու համար:

—«Presse» լրագրի Թղթակիցը հեռագրում է Հռոմից, յունվարի 10-ից, որ Դէպրէտիս աշխատում է համաձայնվել Կայրօլիի հետ: Երէկ նրանք խորհրդակցում էին զանազան առարկաների վրայ: Պրէֆէկտները Դէպրէտիսից հրաման ստացան ուշադրութեամբ հետևել գաղտնի ընկերութիւններին: Պատգամաւորների ժողովի արձակումը նշանակված է յուլիսի առաջին շաբաթում. Նոր ընտրութիւնները հոկտեմբերի կէսից կսկսվեն:

—«Spectator» լրագիրը, լօրդ Լիտտօնի (Բիկօնսֆիլդի մինիստրութեան ժամանակ նախկին փոխարքայ Հնդկաստանի) յօդուածի առիթով, ասում է, որ անկարելի է պարզ հասկացողութիւն կազմել այդ յօդուածի մտքի և նպատակի մասին: Այդ յօդուածը, որ ուղղած է Գլադստօնի դէմ, լրագրի կարծիքով, նման է բարկացած աշակերտի խօսքերին. որը կարող չէ քննադատել փաստերը, և ծանր դատողութիւնների փոխանակ անմիտ հայհոյանքներ է արձակում: Եւ այդ մարդուն լօրդ Սալիսբիւրի հաւատաց մէկ ամբողջ կայսրութիւն, ասելով որ դա ամենալաւ փոխարքան է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզում այս օրերս վախճանվեցաւ մէկ ֆրանսուհի, որին աշխարհիս ժամանակակից կանանց մէջ ամենապառաւը կարելի է համարել: Նա 1774 թւին ծնվեցաւ, վկայ էր առաջին յեղափոխութեան արիւնալից անցքերի և Լուդովիկոս XVI-ի պատժի ժամանակ կանգնած էր էշաֆօտի մօտ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի: Լրագիրները յունվարի 21-ից հաղորդում են. Վարչական յանցաւորների մասին խորհրդի մէջ քննվում են 2,800 անձանց մասին գործեր: Արդէն քննված են 650 անձինք, որոնցից 328 արձակված են, միւսներին նշանակված են աքսորման ժամանակամիջոցներ: Յոյս ունեն օգոստոսին բոլորը վերջացնել: Կօչալովի խնդիրքը հրաժարականի մասին մերժված է: Օդէսսայի քաղաքապետ նշանակված է Նազլօվսկի: Ենթադրում են, որ լինելու է ռուս բօլնեօլօգների ժողով ռուսական բժշկական ջրերը առաջացնելու նպատակով: Բարձրագոյն խորհուրդը ռօտմիստր Բլանկին հասարակ զինուոր դարձրեց: Մինիստրների խորհրդի նիստը Կովկասի նոր վարչութեան կազմակերպելու մասին կայացաւ յունվարի 19-ին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր., երկրորդ 91 ր. 50 կ., երրորդ 91 ր. 50½ կ., չորրորդ 91 ր. 25½ կ., հինգերորդ 90 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 217 ր. 50 կ., երկրորդ 216 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 50 կ., երկրորդ 90 ր., երրորդ 90 ր.: Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրայ արժէ 24,59 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրայ արժէ 209 մարկ, Փարիզի վրայ 256 ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ՁԱՏԻԿ գլխարկներ 1 ր., փուփայկաներ 2 ր. 75 կ., բրիւկներ 4 ր., բէջակներ 8 ր. ամբողջ հագուստ 13—19 ր., դրապ, մահուդ, տրիկօ, սըբիչներ և ալբօմներ կէս գնով: Հնդկական բրինձ 6 կ., սագօ և պերլօվայա կրուպա 9 կ., պանիր չեստեր 70 կ., նշշտայ կօլմանի 18 կ. ֆունտը, լուծողական ձէթի պիլիւլներ 2 կ., լուացքի փոշի 5 կ.: **ՆՈՐՈՒԹԻՒՆ**: Մեղրամոմ և արծաթէ մոմեր 35 և 42 կ. ֆունտը: Մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական մահճակալներ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն երեխաների համար 4 ր., մեծերի համար 12 ռուբլուց: **ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ**:

5—36

„ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԲՈՒԽԳԱԼՏԵՐԻԱՅ“

Ամենանոր և գործնական ձևի, բացարձակ կանոններով և բացատրութեամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորացնել հաշուապահութիւնը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշիւներ, շուտով կը մտնի մամուլի տակ. գիրքը կը բաղկանայ մօտ 400 երեսից. և մաքուր տպագրութեամբ. դորա հետ միասին կը լինի և մի փոքրիկ վիպասանութիւն „Գող“ վերնագրով և „իմ երգերը“ յաւելուածով. ցանկացողները Թիֆլիսում կարող են գրուել „կենտրոնական“ և „Զաքարեայ Գրիգորեանցի գրավաճառանոցներում և Թադէոս Տէր-Միքայէլեանցի մօտ. Բագու Բասիյակիյ մագազինում, ինձ մօտ և „Մարդընկ“ գրադարանում. գաւառական քաղաքներում այն անձանց մօտ, որոնք բարեհաճել են այդ մասին ստորագրութեան թերթ ընդունել:

Երկուսի արժէքն է միասին 2 ր. 50 կ. տպագրութիւնից յետոյ 3 ր.: Բաժանորդների անունները և ազգանունները կը տպագրուեն գրքի վերջում:

Հրատարակիչ Աբէլ Դ. Ապրեսեանց

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹԷՅ, կակաօ, ՇՕԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սուդօկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ՉԳԵՍՏԱԿԱԽՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլեօնկա, ԹԱՄՔԵՐ, սանձեր, ուլթօներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսըբիչներ, թաշկինակներ, կանանց գուլբաներ, մարդկերանց գուլբաներ, տուալետի սապօն, հոտաւէտ ջրեր, շերբեթ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնեակ և 1,000 այլ առարկաներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախվում է **ԹԷՅ**. պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՉՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., ռէվօլվերներ 4—34 ր., ԲՈՒԼ-ԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, ալբօմներ կիսագնով, ֆիլտրաներ և այլն: Ամենամեծ պաշեստ հրացանների և ռէվօլվերների Թիֆլիսում:

86—100

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

„ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ“

Այս ֆիրմայով բանալով Երևանումն գրավաճառանոց՝ կցելով նորա հետ ուսումնարանական, դիւանական, նկարչական և կազմարարական իրեղէնների խանութ, յանձն եմ առնում տալ միշտ յիշեալ ապրանքներից Երևանի և նորա շրջակայ քաղաքների և գիւղերի դիւանատներին և ուսումնարաններին շատ ձեռնտու գներով և պայմաններով:

Ընդունում եմ տպագրել տալու բլանկներ, ծանուցագրեր, յայտարարութիւններ, այցետոմսեր, բրօշիւրներ, նաև գրքեր, ամենաարժան վարձով:

Ինձ մօտ է գտնվում իմ հրատարակած „Տնային բժշկական մարմնամարզութեան“ գրքոյկի պահեստը:

Իմ հասցէն. г. Эривань. Н. Симеонянцу, магазинъ. „Другъ-Дѣтей“.

ԱՐԴԷՆ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Ռուսաց յայտնի գրող **ՎՈՒՋԵՏԻՉԻ** „ДВѢ ЕЛКИ“ մանկական գրքոյկի հայերէն թարգմանութիւնը **„ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ“** անունով:

Այս գրքոյկը ընդունել էր տպագրելու Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը. բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ տպագրելու: Տպագրված է շատ ընտիր թղթի վերայ խոշոր տառերով:

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԷԿ:

Կարելի է ստանալ թէ՛ կենտրոնական գրավաճառանոցից և թէ՛ թարգմանողից՝ հետևեալ հասցէով.

Тифлисъ—на Авлабарѣ Ивану Петровичу *Назаріанцъ*.

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կօղպէքներ 15 կ. հատը, 10,000 ասեղ 8—40 կ. հարիւրը, 10,000 պենալներ 5 կ., 5,000 շիշ պօրտվէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլեօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մատիտներ և գրչակոթեր 8 կ. դիւժինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լեպեօշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական ռէվօլվերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկօ, ալբօմներ, ձմեռվայ պալտօներ, գլխարկներ, վարտիկներ, հագուստ կէս գնով: Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ: Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուդը 2 ր. 50 կ.:

42—60

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող: Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ.

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. աման և վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ** և հոտաւէտ ջրեր և այլն.

71—100

Կովկասեան դպրոցաց հոգաբարձուներէն շատերը՝ մեր հրատարակութիւններն և դասագրքերը ձեռք բերելու համար միշտ մեզ Ռոստով (Դօնի վերայ) քաղաքը դիմելով և ճանապարհի համար աւելի ծախք վճարելով, նոցա դիւրութեան համար հարկաւոր համարեցինք յայտնել, որ այն գրքերը կարող են ստանալ նաև մեր եղբօրից, որոյ հասցէն է. *Тифлисъ*, Григорію Абрамовичу Теръ-Абраміанъ, Ольгинская улица, д. № 3.

Իսկ նորա մօտ գտնուած գրքերը սոքա են.	ր.	կ.
ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ՆՈՐ, 75 վիմատիպ պատկերներով	—	15
ԲԱՆԱԼԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ռուս լեզուի.	—	50
ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն.	—	50
ԸՆԹԵՐՑԱՐԱՆ բարոյական ուսմանց, ազգային դիտելեաց և զուարճալի պատմութեանց	1	—
ԸՆՏԻՐ ԱՌԱԿՆԵՐ Եզովպոսի և Քռիլովի հանդերձ բարոյական խորհրդածութեամբք, 20 վիմատիպ պատկերներով	—	60
ԺԼԱՏ, կատակերգութիւն 3 արարուածով	—	30
ԹԵԳԱՐԱՆ, որ է „կանոն սաղմոս“	—	5
ՅՈՎՍԷՓ Դ. կենսագրութիւն հանդերձ պատկերաւն.	—	25
ՆԵՐՍԷՍ Ե. կենսագրութիւն հանդերձ պատկերաւն.	—	25
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՐԻՄՈՒ (սակաւագիւտ).	1	—
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, երրորդ տիպ. 24 վիմատիպ պատկերներով.	1	—

Բազմաթիւ օրինակներ գնողներուն նոյն զիջումը կը լինի, ինչ որ տպուած է մեր 1882 թուականի օրացուցին մէջ:

Տէր տպարանի և վիմագրատան Յովհ. Տէր Աբրահամեան

(Հ. ւ:) 7—8

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

131—150

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի „ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ“ առաջին հատորը (ա. գրքոյկ), որ բովանդակում է իւր մէջ միայն հէքիաթներ, ժողոված Երևանեան նահանգում և գրած բուն տեղական բարբառով:

Այս ա. գրքոյկի անմիջապէս լոյս տեսնելուց յետոյ, մամուլի տակ կը մտնի նորա բ. գրքոյկը: Իսկ երբ կը վերջացնենք մեր ունեցած հէքիաթների տպագրութիւնը, այնուհետև ձեռնամուխ կը լինենք ժողովրդական աւանդութեանց միատեսակների հրատարակութեան—ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ, ԱՌԱԾՆԵՐԻ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ, ԱՆԷԾՔՆԵՐԻ, ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ և այլն (որոնցից մեծ քանակութեամբ ունենք ժողոված) լոյս ածելով նոյնպէս առանձին գրքոյկներով:

Յուսով եմ, որ մեր պատուելի օտարաքաղաքացի համազգայինք չեն զլանայ իւրեանց կարեաց չափ աջակից լինելու ինձ այս ձեռնարկութեան մէջ:

Բաւականաչափ նիւթ ուղարկողները, որպէս այս հրատարակութեան աշխատակիցներ՝ այսուհետև տպագրուելի բոլոր գրքոյկներից մի մի օրինակ ձրի կը ստանան. բացի այս՝ նոցա ազգ-անունները կը տպագրուեն գրքոյկի վերջը: Իսկ այն պարոնները, որոնք այս աւանդութիւններից նոյնպէս մեծ քանակութեամբ ժողոված ունեն և կը ցանկանան իրանց ժողովածուն վաճառել՝ թո՛ղ բարեհաճեն յայտնել իրանց պայմանները:

Նիւթերը հարկաւոր է գրել (գրածը խնդրում ենք մաքուր լինի և որոշ) բուն տեղական բարբառով. դնելով ժողովածուի վերջը տեղական դժուարիմաց բառերի բացատրութիւնները:

Իմ հասցէն՝ Вагаршапатъ. *Тиграну Навасартянцъ*. Տ. Նաւասարդեանց.

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 ր., ծըծողներ 1 ր., ծալվող աթոռներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱԹՈՌ 4 ր., ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 ռուբլ և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պաստելա ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**:

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բօմազէյ. 1 ր.—1 ր. 30 կ., պարուսինա 40 կ.—1 ր., 300 հատ ռէվօլվեր 4 ր.—35 ր., 700 ալբօմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 ֆունտ թէյ ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.: Երկաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար: Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ:

75—100

Դուրս եկաւ մամուլի տակից Սեդրակ Մանդինեանի հետևեալ աշխատութիւնը. „ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ“. Ծխական դպրոցների Չորրորդ տարուայ դասընթացք և միանգամայն Ա. Բ. և Գ. տարիների համար հրահանգ: Վաճառվում է բացառապէս „կենտրոնական գրախանութում“ գինն է 75 կոպէկ:

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՕԿՏՕՐ ՏԷՐ-ՋԱՆԵԱՆՑ ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան 10—12 ժամը: Սօլօլակ, Սադովայա փողոց տուն Ցուլուկնովի:

5—5

Մի ռուս օրիորդ, որ ուսումն աւարտել է գիմնազիօնում և ունի դիպլոմ՝ ցանկանում է մասնաւոր դասեր ունենալ:

Հարցնել „Մշակի“ խմբագրատանը:

5—5

Дозволено цензурою, Тифлисъ 22 Января 1882 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.